0170900

Համաձայնագիր

«Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման մասին» թիվ 025/21/03/2016 պայմանագրում և դրա Հավելված 1-ում լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ

ք. Երևան

«01» հունիսի 2017թ.

«Յուքոմ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար Կարեն Ասատուրյանի, ով գործում է 01.06.2016թ.-ին տրված լիազորագրի հիման վրա, այսուհետ՝ «Օպերատոր», մի կողմից, և «Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության գործադիր տնօրեն Մարգարիտա Գրիգորյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Բաժանորդ», մյուս կողմից (այսուհետ միասին՝ «Կողմեր», իսկ առանձին՝ «Կողմ»), ղեկավարվելով Կողմերի միջև 21/03/2016թ. կնքված «Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման մասին» թիվ 025/21/03/2016 պայմանագրով (այսուհետ՝ «Պայմանագիր»), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Հետագա համագործակցության նպատակով՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին.

1.1. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ի 1-ին կետը շարադրել հետևյալ կերպ.

1.Տրամադրվող ծառայություն(ներ)՝

N	Նկարագրություն	Ամսավճար (ՀՀ դրամ)	Հասցե(ներ)
1	U!net CIR Extra Երաշխավորված ինտերնետ 150 Մբթ/վ	570000	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26
	U!net CIR Extra Back Up 150 Մբթ/վ	570000	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26
2	U!TV Select Corporate*13	13*2500=32500	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26
3	Dedicated Server	120000	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26

1.2. Պայմանագրի Հավելված 1-ի 2.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ծառայության (Ծառայությունների) ամսական վճարը կազմում է 1,292,500 (մեկ միլիոն երկու հարյուր իննսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ»:

2. Պայմանագրի մյուս կետերը թողնել անփոփոխ:
3. Սույն համաձայնագիրը կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:
4. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման և կնքման պահից:
5. Սույն համաձայնագիրը կազմված է հայերենով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

Օպերատոր	Բաժանորդ
«Յուքոմ» ՍՊԸ	«Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲԸ
Իրավ. հասցե՝ ք. Երևան, Տերյան 19, բն.4	Իրավ. հասցե՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26
Գործ. հասցե՝ ք. Երևան, Գր. Լուսավորիչ 9	Գործ. հասցե՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26
Հեռ.՝ 374 11 400 400	Հեռ.՝ 010650015
Ֆաքս՝ 374 11 400 401	ՀՎՀՀ 01540062
ՀՎՀՀ 00024873	Էլ. փոստ՝ davit.dabaghyan@armtv.com
«Ամերիաբանկ» ՓԲԸ	
Հ/Հ 1570043102134100	
Կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար՝	Գործադիր տնօրեն՝
_____ Կ. Ասատուրյան	_____ Մ. Գրիգորյան